




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ.

614.88

Հ-24



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1921—1924 թ.

370

ՀՀԳ-ՏԻ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

Տպագրական Տեղի II սպարան

1924 թ.

03.06.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

20 JUL 2010

614,88
2-240

370
2329-56



Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի

Կ Ա Ր Մ Ի Ր Խ Ա Չ Ի Ը Ն Կ Ե Ր ՈՒ Թ Յ Ա Ն

1921—1924 թ.



15796

Տ Ե Ր Ե Վ Ա Ն

Տպագրական Տեսիլ II տպագրական

1924 թ.

0 FEBRU 1920



270-24

«Հայաստանի Կարմիր Սաչի Ընկերությունը» նախաձեռնել են 1920 թ. սկզբներին մի շարք հասարակական գործիչներ:

Հայաստանի Հանրապետության ժամանակավոր գերագույն իշխանությունը՝ Պարլամենտը, ընդառաջելով այդ նախաձեռնություն, 1920 թ. մարտի 19-ի որոշմամբ հաստատում է «Հայաստանի Կարմիր Սաչի Ընկերության» կանոնադրերը:

Այս կանոնադրի համաձայն՝ 1920 թ. մարտի 28-ին հաստատվում է Ընկերության Ընդհանուր Ժողովը, վորը և միաձայն ընդունում է «Կարմիր Սաչի Ընկերության» կանոնադրությունը:

Այս յերկու իրավական փաստագրերով «Կարմիր Սաչի Ընկերությունը» ստանում է իր վերջնական ձևակերպումը և Ընդհանուր Ժողովում ընտրված Գլխավոր Վարչությունը՝ նախագահությամբ Գրիգոր Չալխուշյանի և փոխ-նախագահությամբ Բժ. Վահան Արծրունու և Բժ. Սպանդարտ Կամսարականի՝ անցնում է գործի:

«Կարմիր Սաչի Ընկերություն» իր կանոնադրով, ինչպես և հետագայի գործունեությամբ հետապնդում էր այն նպատակները, վորոնք սահմանված էյին ժընեի 1864—1907 թվականների կոնվենցիաներով և զրանց լրացնող հետագա միջազգային իրավական դրություններով՝ որինադրություններով:

Իսկ Ընկերության ընդարձակ կանոնադրության հիմք ծառայել էր «Ռուսաստանի Կարմիր Սաչի Ընկերության» կանոնադրությունը՝ վորտղ կազմակերպչական փոփոխություններով համաձայնացրած Հայաստանի պետական-քաղաքական կառուցվածքին:

Ահա այսպիսի հիմունքներով «Կարմիր Սաչի Ընկերության» անդրանիկ Գլխավոր Վարչությունն սկսում է իր գործունեությունը Հայաստանում:

Գլխավոր Վարչությունն ամենակարճ ժամանակում նյութական ծանր և քաղաքական-հասարակական դժվարին պայմաններում ցուցադրում է մեծ յեռանդ ու արդյունավետ գործունեություն:

Կառավարության աջակցությամբ ու ոժանդակությամբ, արտասահմանյան հայ զաղութների ուղևորությամբ, մասնավոր

նվիրատվություններով, անդամավճարներով և այլ կերպ—Լճիկերությունը հավաքում և զբաղում, նյութերով ու այլ ձևով նկատելի գույք, միջոցներ:

Սակայն 1920 թ. աշնանը մղվող հայ-քեմալական պատերազմը համարյա ամբողջական սպառում և Լճիկերության այդ միջոցները, իսկ 1920 թ. նոյեմբերի 29-ի հեղաշրջումը՝ վերով Հայաստանում հաստատվեց թորհրդային Իշխանություն—ժամանակավորական կառույցից «Հայաստանի Կարմիր Սաշի» գործունեությունը:

Լճիկերության մնացած գույքն անցավ Առողջապահության և Սոցիալ-աղանավության ժողովրդական կոմիտեի անունին, իսկ Գլխավոր վարչությունն առաջին նվազ մասովեց անդործություն:

Սակայն թորհրդային Իշխանությունն յերբեք և վոչ մի հալածանք, նույն իսկ աչառու վերաբերմունք չարտահայտեց:

Ընդհակառակը, յերբ «Կարմիր Սաշի Լճիկերության» գլխավոր վարչության աստարեպետ մնացած սրտացավ անդամներ կենդանություն նշաններ ցույց տվեցին և գործելու կամք հայտնարեցին—թորհրդային Իշխանությունն անմիջապես ընդունաջեց նրանց:

Ժողովրդական կոմիտեի անունին թորհուրդը՝ ընկ. Ս. Մ. Մանուկյանի նախագահությամբ—1921 թ. հոկտեմբերի 15-ի որոշմամբ սրբական վերադարձը՝ կյանքի յե վերակոչում «Հայաստանի Կարմիր Սաշի Լճիկերությունը», տալով նրա գործունեություն խոշոր պետական-հասարակական նշանակություն:

Համաձայն 1921 թ. հոկտեմբերի 15-ի վերոհիշյալ որոշման վերջին «Կարմիր Սաշի Լճիկերության» համար առաջադրվում են նույն նպատակներն ու սկզբունքները, միջազգային—երազմական նույն նախադրյալները, ինչ և 1920 թ. մարտի 19-ի որոշման եր սահմանել: Ավելին և՛ Հայաստանի թորհրդային Իշխանությունը պահում և հաջորդականություն կապն անցյալի հետ և գործունեություն վերակոչում «Կարմիր Սաշի Լճիկերությունը» և վոչ հինը լուծում:

Համաձայն 1921 թ. հոկտեմբերի 15-ի վերոհիշյալ «Հայաստանի Կարմիր Սաշի» գործելու յե ժընեի 1864 թ. կոնվենցիայի և հետագայում այդ ակտը լրացնող կոնվենցիաների համաձայն: Նա մասնում և Կարմիր Սաշի Լճիկերությունների միություն մեջ և այլ յերկրների համապատասխան ընկերությունների հետ հարաբերությունների մեջ մասնում անմիջականորեն:

1921 թ. հոկտեմբերի 15-ի վերոհիշյալ ժողովրդական կո-



Հ. Կ. Ս. ԸՆԿԵՐՈՒՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՇՈՒՄԻ ՀՈՒՆ.

միասրներին խորհուրդը «Կարմիր Սաշի Ընկերություն» նպատակները՝ կոչումը Հայաստանում համարում է՝

- ա) Պատերազմի ժամանակ՝ ոգնել վիրավորներին, ուղղափառներին, հիվանդներին:
- բ) Սաղաղ ժամանակ՝ հաշմանդամներին, ու ժողովրդական աղետներին փնտրել և ազդարարել:
- գ) Պաշտպան համաճարակ ու տարափոխիկ հիվանդությունների և մասնավորապես մալյարիայի դեմ:

Ընդունելով սույն վորոշումը՝ ժողովրդական կոմիսարներին խորհուրդը միաժամանակ առաջադրում է վերաքննել «Հայաստանի Կարմիր Սաշի Ընկերություն» կոմիտեի ազդարարական գործունեությանը, այլ և անդամագրել ընկերության նաև բանվորա-գյուղացիական միություններն ու կազմակերպությունները:

1921 թ. հոկտեմբերի 15-ի վորոշման համաձայն՝ նոյեմբերի 20-ին հրավիրվում է Ընկերության Ընդհանուր ժողովը, վոր և ընտրում է «Հայաստանի Կարմիր Սաշի Ընկերություն» Գլխավոր Վարչություն, իսկ վերջինս էլ իր նախագահությունը՝ հետևյալ կազմով. —

Նախագահ՝ Բժիշկ Սպանդարատ Կամսարական
Փոխ նախագահներ՝ Բժիշկ Ներսես Հակովբյան և
Գրիգոր Յեվանդուլյան

Քարտուղար՝ Բժ. Աշոտ Տեր-Պողոսյան և
Գանձապահ՝ Հովհաննես Մելիքյան:

Նորընտիր Գլխավոր Վարչությունը վաշխելով կառավարության լայն աջակցությունը՝ անմիջապես ձեռնարկում է կազմակերպչական-գործնական աշխատանքներին:

Վորպես հասարակական-անկուսակցական և վոչ քաղաքական-կառավարական կազմակերպություն՝ «Հայաստանի Կարմիր Սաշի Ընկերությունը» իր շուրջն և համախմբում հասարակական անխտիր բոլոր խավերը:

Նախագահության այս կազմը, ինչպես և ընդհանրապես Գլխավոր Վարչությունը, իր գործունեությունը շարունակում է մինչև 1922 թ. հունիսի 22—25-ի ընդհանուր ժողովը, վորն ընտրում է Գլխավոր Վարչության նոր կազմ ու նոր նախագահություն. —

Նախագահ՝ Բժ. Ս. Կամսարական,
Փոխ-նախագահներ, Մարտին Սահակյան և Կոստանտին Գյուլնազարյան. —

Քարտուղար՝ Բժ. Հ. Թադևոսյան և
Գանձապահ՝ Գեվորգ Ամիրյան:

Գլխավոր Վարչության այս կազմը իր գործունեությունը շարունակում է մինչև 1923 թ. ապրիլի 29-ի ընդհանուր ժողովը, վորն ընտրում է նոր Գլխավոր Վարչություն, իսկ վերջինս — նախագահություն հետևյալ կազմով. —

1. Բժ. Կամսարական,
2. Մ. Սահակյան,
3. Յե. Յերգնկյան,
4. Ս. Խուզավերդյան և.
5. Բժ. Ն. Հակովբյան:

Նախագահ՝ միաձայնություն ընտրվում է Բժիշկ Սպանդարատ Կամսարականը, վոր անընդհատ անդամակցել է Գլխավոր Վարչության և նախագահություն «Հայաստանի Կարմիր Սաշի Ընկերություն» — նրա հիմնադրության որվանից սկսած:

Այսպիսով «Հայաստանի Կարմիր Սաշի Ընկերությունը» պահպանում է իր գոյություն ու գործունեություն հաջորդականություն ու անընդհատությունը հիմնադրության որվանից 1920 թ. սկզբից:

1922 թ. մայիսին հաստատվում է «Հայաստանի Կարմիր Սաշի Ընկերություն» նոր կանոնադրությունը՝ համաձայն 1921 թ. հոկտեմբերի 15-ի վորոշված սկզբունքների:

*
* *

«Կարմիր Սաշի» անմիջական կոչումն է յեղել՝ պատմականորեն — ոգնություն գալ վիրավորներին ու հիվանդներին պատերազմի ժամանակ, իսկ խաղաղության որերին՝ մթերել միջոցներ, ապահովել պահեստներ ի դեպ պատերազմի:


Թեև հետագայում «Կարմիր Սաշի» գործունեությունը նպատակն ու ասպարեզը ընդլայնվեց՝ բայց և այնպես քաղաքակիրթ — յեվրոպական պետություններում ծանրության հիմնական կենտրոնը մնում է հինը և միայն համեստ ծավալով այդ գործունեությունը շրջանակը ընդլայնվում՝ հասարակական աղետներին փնտրելուն ոգնելու համար:

Միանգամայն այլ պատկեր է ներկայացնում «Հայաստանի Կարմիր Սաշի Ընկերությունը»:

Հայաստանը իմպերալիստական պատերազմից, հայ — քեմալական, ազգամիջյան և քաղաքացիական կռիվներից ավերված, արնաքամ դարձած մի յերկիր էր, զաղթականների, վորրերի, սովյալների ու հիվանդների հայրենիք:

Այսպիսի իրականություն մեջ պարզ է վոր «Հայաստանի Կարմիր Սաշի Ընկերությունը» պետք է ծավալեր իր աշխատանքները և գործունեությունը այլ ուղղությամբ:

Առավելապես անհրաժեշտություն էր դրացվում «Կարմիր



«Խաչի» գործակցութեան մալյարիայի դեմ վարելիք կովում:

Յեթե նախապատերազմյան շրջանում իսկ մալյարիան դարձել էր համաժողովրդական գերագույն մի շարիք, վոր ֆիզիկապէս կազմաւուծում, հոգեպէս հյուծում մեր ժողովրդին, դարձնելով նրան աշխատանքի անընդունակ — այդ շարիքը առավելագույնս ահռելի դարձավ պատերազմից հետո:

Տնտեսական արտառոց քայքայումը, սովը և ալյն — ել ավելի ծավալեցին ու խորացրին այս շարիքը:

Այստեղ դեռ չենք խոսում համաճարակի բնույթ բնորոշած այլ շարիքների՝ մասնավորապէս վեներական ախտերի մասին:

«Հայաստանի Կարմիր Խաչի» Ընկերութեանը, տարդ և, վոր յուրովսանը պայքարելու յեր այս ամենի դեմ և աջակից հանդիսանալու պետական իշխանութեան աշխատանքներին:

Ահա այս առաջադրյալ աշխատանքների հաջողութեան համար «Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերութեան» Գլխավոր Վարչութեանն իր գործունեութեան յերկրորդ, խորհրդային շրջանում մտահոգված և լինում՝

ա. Կազմակերպել գաղափարներում ճշուգիւր,

բ. Կապ ստեղծել արտառանձանյան Հայ Կարմիր Խաչերի և այլ նման — կազմակերպութեանների հետ,

գ. Գործակցել խորհրդային Յերկրների «Կարմիր Խաչերին»

դ. Իրավական վավերացումն ստանալ Կարմիր Խաչի Միջազգային Խորհրդի կողմից,

ե. Միջոցներ հայթայթել և ապագայի համար մնայուն պահեստի ֆոնդ կազմակերպել և ալյն:

Առաջին իսկ որվանից, Գլխավոր Վարչութեանը աշխատել և ճշուգիւր կազմակերպել գաղափարներում և այդ ուղղութեամբ հատուկ հրահանգներ ուղարկել, ցուցմունքներ արել պաշտոնական հիմնարկութեաններին ու պաշտոնական անձանց:

Կազմակերպչական ավանդներից զուրկ, հասարակական նախաձեռնութեան դեռ անվարժ և նյութականապէս ծանր որեր ապրող գաղափր արժանի չափով սկզբնական շրջանում չի արձագանքել:

Բայց և այնպէս, Գլխավոր Վարչութեանը շատ դժվարութեամբ իր հրահանգներով և գործնական մի շարք ցուցմունքներով նպաստել և Լենինականում (Ալեքսանդրոպոլ), Զանգեզուրում, Լոռվում, Դիլիջանում, Եջմիածնում և Մեղրիի շրջաններում կազմակերպելիք ճշուգիւրին, խրախուսելով տեղերի հարուցած զիմումները և պարբերաբար հյուրական անհրաժեշտ միջոցներ հայթհայթելով:

Գլխավոր վարչութիւնը գործի անցնելով՝ փութացել և նաև անմիջապէս հարարեցութեան մէջ մտնել արտասահմանյան հայ «Կարմիր Սաշի»-ի հետ, վորոնց, ինչպէս և բնականաբար արտասահմանյան հայ գաղութային կազմակերպութիւնների գործակցութեան բացը զգացվում էր յերկրի առողջացման գործում:

Միջազգային — իրավական և հաղորդակցութեան գծով արութիւնները այս դեպքում ևս արգելքներ են հանդիսանում: Սակայն չնայած դրան — արտասահմանյան հայ գաղութները հատկապէս գործոն աջակցութիւն են ցույց տվել:

Այսպէս որինակ՝ Հ. Կարմիր Սաշի բժշկական առաքելութիւնը Հայաստանում վերջացնելով իր ոգտավետ գործունեութիւնը՝ իր ունեցած ամբողջ գույքն ու գեղարարքը փոխանցեց «Հայաստանի Կարմիր Սաշ»-ին:

Արտասահմանի հետ կապ պահպանելու նպատակով հենց Գլխավոր վարչութիւնը ունեցել և իր հատուկ լիազօրներ՝ ինչպէս որինակ միտս ՌԻՔԻՆԳՈՆԸ՝ Անգլիայում, սինիոր ՊԻՐԻՆԻՆ՝ Իտալիայում և այլք, վորոնք չոչափելի ոգնութիւն են ցույց տվել: Ծյուղեր են կազմակերպվել Փարիզում, Մարսելում, Նյու-Յորքում և Թավրիզում, վորոնք չեն հապաղել իրենց նյութական ոգնութիւնը հասցնել Գլխավոր վարչութեան:

Գալով Սորհրդային Հանրապետութիւնների Կարմիր Սաշերին՝ — նրանց հետ անմիջական կապի ու գործակցութեան անցել և «Հայաստանի Կարմիր Սաշ» վերջերս միայն:

Գլխավոր վարչութիւնն այս վերջին խնդրում պաշտպանել և այն տեսակետը, վոր ամենատեղեւ կապ հաստատելով՝ Հայաստանի Կարմիր Սաշը մնալու յե ինքնուրույն հիմարկութիւն, վորպիսի դրութիւնն ու իրավունքը ճանաչված և 1923 թ. մայիսի 15-ին Մոսկվայում կայացած Սորհրդային Հանրապետութիւնների Կարմիր Սաշերի Սորհրդաժողովում, վորին մասնակցում էր Հայաստանի Կարմիր Սաշի Գլխավոր վարչութեան լիազօր ներկայացուցիչը:

Գլխավոր վարչութիւնը մտահոգված և յեղել նաև Կարմիր Սաշի Միջազգային Կենտրոնի՝ Սորհրդի կողմից ճանաչվելու խնդրով և այդ ուղղութեամբ ստացել և պատշաճ աջակցութիւն Սորհրդային ֆեդերացիայի կողմից:

1923 թ. ոգոստոսին ժընկում կայանալիք Կարմիր Սաշերի Միջազգային Սորհրդաժողովին Հայաստանի Կարմիր Սաշը հրավեր էր ստացել մասնակցելու վորպէս ինքնուրույն միավոր, սակայն, ինչպէս Սորհրդային այլ Հանրապետութիւնների Կարմիր

Սաշերը, նույնպէս և Հայաստանի Կարմիր Սաշն անկարող յեղավ ոգավել այդ հրավերից:

Սակայն այս ամենը բավարար չի համարվում: Գլխավոր վարչութիւնը կարեւոր և գտել հատուկ պատգամավորութիւն ուղարկել արտասահման՝ հայկական գաղութներ, կապվելու գաղութային կազմակերպութիւնների հետ, նրանց շահագրգռելու Հայաստանի Կարմիր Սաշի գործունեութեան, նրա առաջադրյալ նպատակների և յերկրի ու ժողովրդի անսահման կարիքների հետ:

*
* *

Սորհրդային Իշխանութեան կողմից կյանքի վերակոչված Կարմիր Սաշի Գլխավոր վարչութեան հիմնական հոգսերից մեկն և յեղել հատկապէս առաջին շրջանում՝ Միջազգային գաղթած 7000 տարազգիների առողջապահական վիճակի բարելավումը:

Այս նպատակով վեգի-Բասարի շրջանում, ուր տեղավորված են այդ գաղթականները, թրքական Բոյուք-Վեգի մեծ գյուղում բաց արվեց մի բժշկակայան հատուկ բժշկով ու մի բուժակով:

Այդ բժշկակայանն սկսել և գործել 1922 թ. հունիսի 25-ից: Բժշկակայանի բժիշկն ամեն ուր ընդունել և շրջակա 18—20 գյուղերից յեկած հիվանդներին, ինչպէս և ինքն և անցել այդ գյուղերը, տեղն ու տեղը հասցնելով ոգնութիւն հիվանդներին:

Ըստ հիվանդութիւնների — ամենատարածվածը մալարիան և, ըստ վիճակագրական տվյալների՝ հիվանդութիւնների 95 տոկոսը կազմում է մալարիան, իսկ մնացած 5 տոկոսի մէջ մտնում են աղիքների, կաշվի, թոքերի և վիրաբուժական:

Չբավականալով միայն մալարիայի դեմ մաքառելով, Կարմիր Սաշի Գլխավոր վարչութիւնը, ձմրան ցրտերին իր բժշկակայանների միջոցով բաժանել և գրեթե բոլոր գյուղերի գաղթականներին շորեղեն ու կոշիկ:

Հայաստանի Կարմիր Սաշի Գլխավոր վարչութեան բժշկասանիտարական հետեյալ գործը՝ դա Ջանգեղուրի բժշկակայանն ու բուժակայանն է:

Պատերազմից հետո՝ Ջանգեղուրը մատնված էր սովի ու ցավի: Հաղորդակցութեան միջոցների բացակայութիւնը, կենտրոնից հեռու լինելու հանգամանքը և այլն — ավելի ևս գծվաւացնում էյին իրերի դրութիւնը, ոգնութիւն կազմակերպելու հնարավորութիւնը:

Գլխավոր վարչութիւնը Զանգեզուրի ոգնութեան կազմակերպման գործը հանձնեց նախագահութեան անդամ բժ. Ներսես Հակովբյանին, վորպէս տեղացու:

Բժ. Հ. Հակովբյանը 1922 թ. ոգոստոսին կազմակերպում է Կարմիր Սաշի ճյուղ և վերջինիս մասնակցութեամբ Ղարաբլիտի գյուղում բաց և անում բժկակայան և բուն Զանգեզուրի Տեղ գյուղում՝ բուժակակայան:

Այս կայանները գործում են 1922 թ. հոկտեմբերից մինչ օրս: Զանգեզուրի բժկակայան ու բուժակակայանը հակայական ոգնութեան և ցույց տալիս տեղական ազգաբնակչութեան, ստանալով Գլխավոր վարչութիւնից պարբերաբար դեղորայք, դրամ, շորեղեն և այլն:

Յեթն նյութական համարյա ամբողջ ոգնութիւնը Զանգեզուրի ճյուղը ստանում էր Կարմիր Սաշի Գլխավոր վարչութիւնից՝ բնդհակառակը ամբողջ կազմակերպչական աշխատանքները վարում էր հենց ինքը, տեղական մարմինը: Զանգեզուրի ազգաբնակչութեան բնդհանուր չբավորութիւնը և մասնավորապէս 1922-23 թ. թ. անբերրիութիւնը՝ սովը, զրկել է ին տեղական ճյուղը նյութական միջոցների ազդրւորների ազանութեան հնարավորութեան:

Զնալած այս ամենին՝ Զանգեզուրի ճյուղը և նրան յենթակա բժկակայանն ու բուժակայանը հաշտարեւում են մեծ յետանդ:

Ավելի քան մալարիան՝ Զանգեզուրում արտատվոր ծավալունի քոսը, վորի դեմ պայքար և մղել տեղական ճյուղը: Ստանալով Գլխավոր վարչութիւնից դրամական միջոցներ, շորեղեն, դեղորայք ու սաղան՝ մի շարք վայրերում բաց են արվում բաղանիքներ, ինչպէս Ղարաբլիտայում, Տեղում:

Բժկակայանն ու բուժակայանը բացի իրենց բժկական անմիջական պարտականութեանների կատարումից՝ հսկում ու ղեկավարում են նաեւ բաղանիքների կազմակերպութեանն ու գործունէութեանը:

Շնորհիվ անբերրիութեան ու սովահարութեան՝ տեղական ճյուղը անհրաժեշտ և համարում կազմակերպել նաեւ ռանդակայաններ և ճաշարաններ:

Մանդակայան՝ ճաշարաններ կազմակերպվում են Տաթևում, Մուղանջուղում և Բայանդուրում:

Նյութական միջոցների սղութիւնը այս ստպարիղում ևս զրկեց թէ Գլխավոր վարչութիւնը և թէ տեղական ճյուղին ալիւ ընդարձակ ծավալ սաղ անդակայաններին:



Հ. Կ. Խ. ԸՆԿԵՐՈՒՅԱՆ
ՆԵՄԻՐԱԾՆԻ ՏՐՈՒՔԻՄԱԿԱՆ ԿԱՅԱՆ.

Ինչ վերաբերում է անմիջական բժշկական ոգնություն՝ այդ ոգնությունը կազմակերպում են բժշկակայանն ու բուժակա-
կայանը, Վոչ միայն հիվանդներին կայաններում ընդունելով, այլ
շրջագայելով բոլոր գյուղերը, հաճախելով հիվանդներին:

Ինչպես նկատեցինք՝ Զանգեզուրում հիվանդությունների
շարքում առաջին տեղը բռնում է քոսը, հետո մալյարիան և այլն:

Այս աստղաբերում ևս Գլխավոր վարչությունը դրամա-
կան ու գեղորայքի ոժանգակությունն և հանդիսանում միակ
աղբյուրը Զանգեզուրի ճյուղի գործունեությունը: Իսկ վերջինիս
միջոցների սուղ լինելը՝ սահման և դրել ճյուղի գործունեության
նաև այս խնդրում:

Կարմիր խաչի Զանգեզուրի ճյուղը ուղարկություն է դարձ-
րել նաև բժշկական-սոցիալական պրոպագանդայի վրա, կազ-
մակերպելով դասախոսություններ, գլխավորապես Սիսիանի
գյուղերում ու շրջանի գյուղացիական համագումարներում, բա-
ցատրելով հատկապես քոսի ու կաշվի հիվանդությունների դեմ
պայքարելու միջոցները:

Բժշկակայանները 1923 թ. ընդունել են հիվանդներ՝ 11172
հոգի: Այս հիվանդներից՝ 40 տղի, մալյարիայով տառապողներն
են, իսկ 15 տղի, քոստաներ և մնացածը այլ հիվանդներ:

Պետք է մատնանշել, վոր քոստաների տոկոսի համեմատա-
կան պակասը բացատրվում է նրանով, վոր Կարմիր խաչը մի-
ջոցների սղություն պատճառով հնարավորություն չի ունեցել բա-
նալու բոլոր գյուղերում բազանիսներ և անհրաժեշտ չափով
մատակարարելու քոսի դեմ գերծածվող դեղորայք:

Մասնաճյուղը լավագույն դեպքում կարող է բավարարել
տեղական ծախսերի 10 տոկոսը միայն, իսկ մնացյալ ծախսերն
ամբողջովին ընկնում են Կարմիր խաչի Գլխավոր վարչության
վրա:

Լուսվա ճյուղը կազմակերպվել է 1922 թ. հունիսի 24-ին
Նախաձեռնություններ Լուսվա գավառի միջին բժիշկներին: Կազմա-
կերպչական ժողովում ընտրված ժամանակավոր վարչությունը
անմիջապես անցնում է գործի, նախապես առանձին թուղթիկնե-
րով ծանոթացնելով ժողովրդական լայն խավերին Կարմիր խաչի
նպատակներին հետ:

Կարմիր խաչի Լուսվա բաժանմունքի՝ ճյուղի առաջին ու
շրջափնի գործնական քայլը՝ դա Գյուլաքարակի բժշկակայանն

և: 1922 թ. ոգնատուն՝ Կարմիր խաչի տեղական ճյուղը, գնահա-
տելով Գյուլաքարակի բժշկական կայանի դերը, նշանակությունը
շրջակա գյուղացիական խավերի համար՝ իր վրա յե վերցնում
այդ կայանի պահպանություն գործը: Վերցնելով այն Առողջապահ
սեպտեմբերի 1-ից վերաբացվում է Գյուլաքարակի բժշկական
կայանը՝ գործում է վորպես Կարմիր խաչի հիմնարկություն:
Սկզբում առանց Կարմիր խաչի Գլխավոր վարչության հոսան-
դակության, սոսկ տեղական միջոցներով՝ կայանը նորոգվում,
կահավորվում է ու վերակառվում հիվանդների ընդունելությունը:

Բժշկական լուրջ ոգնություն, բացի Գյուլաքարակի ազգա-
բնակությունից, մատակարարվում է շրջանի այլ գյուղական
ազգաբնակություն, նույնիսկ շատ հեռու ընկած բժշկակայանից:
Հատկապես յեռանդուն և յեղել պայքարը քոսի ու մալյարիայի
դեմ: Այս յերկու ամենատարածված հիվանդությունների դեմ
կովկասյան նպատակով գյուղական, հատկապես չքավոր ժողովրդին
արվել է խինին և հակաքոսային դեղորայք:

Ընդհանուր գաղափար տալու համար բժշկական ոգնության
ասենք, վոր ըստ ստուգված տվյալների՝ 1922 թ. սեպտեմբերի
1-ից մինչև 1923 թ. մայիսի 1-ը Գյուլաքարակի բժշկակայանից
անցել են հիվանդներ՝ 3071-ը, իսկ տներում՝ 1054:

Կարմիր խաչի Գլխավոր վարչությունը ներկայումս դրա-
մով, դեղորայքով, և այլ կերպով ոժանգակում է իր Լուսվա ճյուղին:

Կարմիր խաչի կենտրոնական վարչության ձեռքով ու մի-
ջոցներով 1923 թ. կազմակերպվում է Նվմիածնի գավառի յերկու
շրջանների Սամաղարի ու Զանգեբասարի ազգաբնակության
մեջ մալյարիայի դեմ կովկասյան գործը:

1923 թ. հունիսի 14-ից սկսում է իր գործունեությունը Սա-
մաղարի շրջանի մալյարիայի դեմ կովկասյան թուղթիկ խումբը: Կազ-
մված մեկ բժշկից և 3 բուժակից, իսկ հուլիս ամսին ավելանում է
նաև գլխավոր մի քույր: Այս կազմով խումբն իր գործունե-
ությունը շարունակում է մինչև հոկտեմբերի 15-ը:

Խմբի կենտրոնացված ընտրվում է Զեյվա գյուղը, վորով-
հետև այդ և նրան հարեան գյուղերը ավելի ցած լինելով, քան
Սամաղարի շրջանի մյուս գյուղերը և գտնվելով գլխավորապես
Կարասու և Քասաղ գետերի ափերին, վոր հեղեղում են իրենց
ափերը և կազմում մեծ ճահիճներ աճած հեղեղնով և գլխավորա-
պես այն պատճառով, վոր այդ գյուղերի համարյա ամբողջ գյու-
ղացիությունը զբաղված է բրնձի մշակությամբ, ավելի շատ են
յենթակա մալյարիայով հիվանդանալու:

Ուղտատուի 1-ից, խմբի մի մասն անցնում և Սամաղար և ուրիշ գյուղեր:

Գյուղացիութիւնը շատ բարեցակամ վերաբերմունք և ցույց ավել խմբերի գործունեութեան:

Խմբի գործունեութեան ընթացքում հունիսի 14-ից մինչև հոկտեմբերի 15-ը հաճախել են ընդամենը 15.256 հիվանդ, վարակացից մեկը մեկով հիվանդներ 9.486 հ., մյուս հիվանդութուններով 5770., այսպէսով մալարիկները կազմում են հաճախող հիվանդների 62.2 տոկոսը:

Հետաքրքիր է այսպէս մասնաշնչել, վոր Զեյվայի կայանում հիվանդներից՝

Տղամարդիկ կազմում են . . . 51.50/0, իսկ

կանայք « « « . . . 48.50/0

Սամաղարի կայանում՝ հիվանդներից

Տղամարդիկ 70.50/0

կանայք 29.50/0


Հիվանդների ըստ սեռի այս մեծ տարբերութիւնը յերկու կայաններում բացատրվում և նրանով, վոր Զեյվայի կայանում աշխատակիցների շարքում յեղել և գլխով ժողովրդական քույր, իսկ Սամաղարում՝ այսպիսին չկար: Գյուղացի կանայք ավելի վստահութեամբ դիմում են, յերբ բժշկական պերսոնալի շարքում լինում և կին:

Սամաղարի բժշկական խումբը ըստ անմիջապէս ոգնութիւնից՝ կազմակերպել և դասախոսութիւններ ու զրույցներ ատող ջառագանջութեան, հատկապէս մալարիայի մասին:

Այս դասախոսութիւնների ու զրույցների արդյունքը վնչ միայն այն էր, վոր հիվանդները մեծ վստահութեամբ ելին դիմում բժշկական կայան, այլ և Սամաղարի շատ գյուղեր կազմել են համախոսականներ՝ ճահիճներ չորացնելու և հետադաշում այլ ևս չալթուկ չցանելու:

Խմբի հաջողութիւնը և ժողովրդականութիւնը աճեցան մեծ էր, վոր ոգնութեան դիմումներով հիվանդներ գալիս ելին նաև Ղուրդուղլից և այլ շրջաններից:

Ելմիսանի գավառի յերկրորդ բժշկական թուղիկ խումբը իր գործունեութեան վայր ընտրել էր գավառի Զանգիրազարի շրջանը: Այս խումբն ևս իր գործունեութիւնը սկսում և 1923 թ. հունիսի 14-ից: Խումբն իր աշխատանքները շարունակում և մինչև հոկտեմբերի 15-ը՝ իր կազմում ունենալով մի բժիշկ 3 բուժակ և մի գլխով ժողովրդական քույր: Սկզբում խումբն աշխատում և ճահճուտով ու չալթուկի ցանքներով հարուստ Սարվանլար գյուղում:



Հ. Կ. Խ. ԸՆԿԵՐՈՒՅԱՆ
Կոստյի քոչանի Բժշկական

այդ աշխատանքը շարունակվում և մինչև հուլիսի 31-ը:

Հուլիսի 31-ին՝ բժշկական խումբը տեղափոխվում և Ղա-
րաղշխան գյուղը, իսկ ոգոստոսի 22-ին անցնում Սաթուհարի,
թողնելով Ղարաղշխանում մի բուժակ ու գլխավոր քույր:
Սումբը շրջագայում և և այլ մի շարք գյուղեր:

Սումբը հիվանդների ընդունելություն և ունեցել 17.173 հո-
ղի, վորոնցից 56.7 տոկ. մալյարիկներ:

Զանգիբասարի շրջանի թուրքիկ բժշկական խումբն ևս չի
բավականանում անմիջական բժշկություն, այլ և միաժամանակ
կազմակերպում և դասախոսություններ. ժողովներում և համա-
գումարներում հորդորում գյուղացիության մաքրել առուները,
ջրացնել ճահիճները և այլն:

Այս ամենը տալիս և զգալի, շոշափելի արդյունք:


Այս թուրքիկ խումբը մասնագիտացում և նաև գիտական աշխա-
տանքներով, վերցվում և մի քանի հարյուր մալյարիկների արշուն,
ուսումնասիրվում են տեղական մոծակների տեսակները, մոծակ-
ներից կազմվում կոլեկցիա, ինչպես և չալթուկների ու ջրերի մեջ
պատահող մոծակներից. կատարվել են ամենուրեք ջրերի հետազո-
տություններ:

Զանգիբասարի շրջանում հատկապես նկատվում և կին հի-
վանդների հաճախումների սակավությունը, շնորհիվ նրան, վոր
թյուրք աղաքնակությունը այս շրջանում կազմում և զգալի
թիվ:

Լեռնականում (Նախ. Ալեքսանդրապոլ) կազմակերպված ևր
կարմիր Սաչի ճյուղ, վորը պահում ևր մի մանկատուն ու մուր՝
մոտ 100 մանուկներից բաղկացած, ստանալով մասամբ միջոցներ
Գլխավոր Վարչությունից:

Կոտայքի շրջանում՝ Քանաքեռում 1923 թ. մարտի 5-ից
բացվել ևր բժշկական կայան, վորը հետագայում փակվեց,
Դարապետյան տեղափոխելու նպատակով, վորովհետև վերջինս
բժշկական ոգնություն անհամեմատ մեծ կարիք ունի, քան
Կոտայքի շրջանը, վորն ավելի ապահովված և Առօրյա կազմու-
կերպած ոգնություն:

Եջմիածնի շրջանում ուղարկած թուրքիկ խմբերի գործու-
նեությունը համոզեց Կ. Ս. Գլխավոր Վարչության, վոր մալյա-
րիայի այդ բնագավառում անհրաժեշտ և գիտականորեն և գործ-
նականապես կազմակերպել մղվելիք պայքարը մալյարայի, այդ
չարիքի դեմ: Այս ուղղությամբ Գլխավոր Վարչությունը արգեն
ձևումառնել և յեղել կազմակերպելու Եջմիածնում արդյունավետ
կայան իր հատուկ լաբորատորիայով և մասնապես բժշկական



Հ. Կ. Ս. ՀԵԿԵՐՈՒՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳԵՂԱՊԱԿԵՍ

*
* *

կազմով: Տրոպիքական կայանն ունի արդեն 15 մահճակալ մշտական հիվանդների համար, 2 թուղթիկ խումբ և փոխադրության անհրաժեշտ միջոցներ: Տրոպիքական կայանն սկսելու և իր գործունեությունը մայիսի վերջերին: *)

Ներկայումս Գլխավոր Վարչությունը մտահոգված և նույնանման կայաններ բանալով Հայաստանի մայրաքաղաքում տառապող զանազան շրջաններում (Զանգեզուր, Դարալագյազ և այլն):

Դիրքի շրջանում Կ. Սաչն ունի իր մասնաճյուղը, վորը Զարիսեզ գյուղում պահել և Գլխավոր Վարչության ոժանդակությամբ մի բուժակակայան:

*
* *

Բացի վերոհիշյալ ձևի բժշկական ոգնությունից՝ Հայաստանի Կարմիր Սաչի Գլխավոր Վարչությունը կազմակերպել և նաև բժշկա-կրթական գործը. այն և գլխավոր քույրերի դասընթացք, վորի կարևորությունը շատ և զգացվում:

Տեղի և այլ կազմակերպչական-տեխնիքական դժվարությունների պատճառով՝ դասընթացքները հնար չկալ վերաբանալ միայն 1923 թ. հունվարի վերջերին: 1923 թ. դասընթացքներում ուսանում էլին 23 հոգի, ըստ մեծի մասին՝ միջնակարգ կրթությամբ:

Դասախոսում են մասնագետ բժիշկներ, գործնական աշխատանքների համար ոգտվում հիվանդանոցներից ու մանկավարժական թանգարանից:

Առարկաները դասավանդվում են այն ծրագրով, վորը մշակել և հատուկ բժշկական հանձնաժողովը և հաստատել Հայաստանի Կարմիր Սաչի Գլխավոր Վարչությունը:

Այս ուսումնական տարվա աշնանը Կարմիր Սաչը կունենա իր անդրանիկ շրջանավարտները:

Գլխավոր Վարչության մտահոգությունն առարկան և ընդլայնել այդ դասընթացքները և միաժամանակ հիմնել գլխավոր քույրերի հանրակացարան:

Գլխավոր քույրերի զգալի կազմ ունենալը առաջնակարգ անհրաժեշտություն և Հայաստանում շնորհիվ այն փաստի, վոր կանայք գյուղերում և մանավանդ թրքական գյուղերում ամաչում են զիմել այդ բժիշկների ոգնություն և ընդհակառակը վստահությամբ զիմում են կին բժիշկներին, գլխավոր քույրերին:

*) Եջմիածնի տրոպիքական կայանը ապահովված և նյութականապես Նյու-Յորքի Կարմիր Սաչի՝ մեր մասնաճյուղի ոժանդակությամբ մոտ 6 ամսով:



Հ. Կ. Ս. Ըճկեուրյան գլխավոր քույրերի զգրոց
(Մի խումբ սաներ դասախոսների հետ միասին)

*
* *

Կարմիր Սաչի մուտքի հիմնական աղբյուրը — դա կառավարության սահմանած հատկացումներն են:

Այսպես՝ համաձայն ժողովրդական Կոմիսարների Սորհրդի 1922 թ. հունիսի 21-ի դեկրետի՝ «Հայաստանի Կարմիր Սաչի» բնկերության ոգտին հատկացվում է հավելյալ 5 տոկոս տուրք՝ պետական բոլոր ուղղակի հարկերից, վորպիսին և գանձում է ինքը Կառավարությունը՝ տուրքերի հետ միաժամանակ ու փոխանցում Գլխավոր վարչություն:

Համաձայն նույն իշխանության՝ ժողովրդական առ 27 դեկտեմբերի 1922 թ. դեկրետի՝ Հայաստանի Կարմիր Սաչի ոգտին գանձվում է նաև՝—

ա) Յուրաքանչյուր արտասահմանյան անցաթղթի արժեքի 15 տոկոսը:

բ) Վճարովի մուտք ունեցող զվարճության բոլոր տեղերից (թատրոն կինո, ցիրկ) մուտքի 3 տոկոսը:

Բացի այս՝ ըստ Անդրկովկասյան Ֆեդերացիայի ժողովրդական Կոմիսարների Սորհրդի վորոշման՝— յերկաթուղային տոմսերի արժեքից ևս տոկոսական հատկացում է սահմանված Անդրկովկասյան Սորհրդային Հանրապետությունների Կարմիր Սաչի-րի ոգտին:

Բացի այս կայուն, մնայուն մուտքերից և անդամավճարներից՝ թե՛ կենտրոնը և թե՛ տեղական ճյուղերը մուտք ունեցել են նաև յերկուլթներից, զրոսանքներից և այլն:

Սակայն «Հայաստանի Կարմիր Սաչի» գլխավոր ֆոնդն առ այժմ կազմում է վոնչ այդ զրամական յեկամուտները, այլ գլխավորապես արտասահմանից ստացած զեղորայքը:

Ընկերության վերագործունեյության սկզբնական շրջանում վոնչ պահեստ կար, վոնչ էլ վորևե շոշափելի գույք:

Առաջին և խոշոր չափի զեղորայքի ստացումը՝ դա այն էր, վորը թողեց Հայաստանի Կարմիր Սաչին 1922 թ. մայիսին՝— Պոլսի հայ Կարմիր Սաչի բժշկական առաքելությունը:

Կարմիր Սաչի բնկերության գլխավոր վարչության զրամական և մթերային այլ միջոցների մասին կցված են մի քանի տախտակներ, տեղեկագրիս հավելվածում:

*
* *

Այս թուղթիկ տեղեկագրում հիշատակված գործունեյությամբ միայն չի սահմանափակվել Կարմիր Սաչը: Թե՛ Գլխավոր Վարչությունը և թե՛ տեղական ճյուղերը յուրովսանն մասնակ-

ցություն են ցույց տվել, ոժանդակել այն բոլոր պետական-հասարակական ձեռնարկություններին, վորոնք նույն կամ համանման նպատակներ են հետապնդում:

Հայաստանի Կարմիր Սաչի Ընկերությունը բացի իր անցյալի գոյության բնթացքի շարունակումը — ներկայումս մասնագրված է ու նախագրծում է հետեյալը՝

ա. Մալյարիայի գեմ վարած պայքարին տալ ավելի հիմնական, կազմակերպված բնույթ, հիմնելով կենտրոնական տրույիքական ինստիտուտ և տեղական կայաններ, աջակից հանդիսանալով կառավարության ևս, վոր այդ ուղղությամբ ձեռարկել և պատասխանատու ու գրվարին աշխատանքների (ճահիճների չորացում, մալյարիանպատ բույսերի ցանքսավորություն և այլն):

բ. Կազմակերպված ույթերով պայքարել վեներական հիվանդությունների գեմ, վորոնցից տուժում է գուղացիությունը:

գ. Նախատեսելով Ամերկում գործունեյության անխուսափելի կրճատումը, թերևս, գաղարը, այժմեն իսկ նախաձեռնել վորերի ոգնության կազմակերպության:

դ) Բազմական թե՛ աշխատանքի հաշմանդամների ոգնությունը:

յե. Գլխության քույրերի գաղնթացքների ծավալումն ու հանրակացարանի կառուցում:

զ. Մնայուն պահեստի ֆոնդի ապահովումն և այլն, և այլն:

Կազմակերպչական շրջանից անցած, վայելելով Կառավարության ամենալայն աջակցությունը և հասարակական բոլոր խավերի լիակատար վստահությունը՝ Հայաստանի Կարմիր Սաչի Ընկերությունը լիահույս է, վոր նա կարող կհանդիսանա հաջողությամբ պսակել իր ծրագրած պատասխանատու աշխատանքները:

Վորքան էլ մեծ չլինի կարիքը և զեռ շատ համեստ մեր տրամադրության ներքո յեղած միջոցները, բայց և այնպես կառավարության ոժանդակությունը, հասարակական ույթերի գործակցության պատրաստակամությունը, տեղերի որ ավուր աճող ինքնագործունեությունը, հուսադրում են մեզ:

Իսկ արտասահմանյան հայ գաղութների մինչ որս հայտնաբերած սրտացավ վերաբերմունքը մեզ հավատ է ներշնչում, վոր հայկական հատվածներն ապագայում ևս կցուցադրեն ավելի մեծ յեռանդ գործունեյության ու ոգնության:

ՅՈՒՑԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԻԱԶԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՏԱ-
ՍԱՀՄԱՆԻՑ ՍՏԱՑԱԾ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՅԵՎ ԱՅԼ ԱՊՐԱՆՔԻ

1922 թ.			
1	մայիս	1	Կ. Պոլսի Հ. Կ. Խաչից՝ բժշկական ա- ռաքելությունից
			Զանազան դեղորայք և իրեր
2	հունիս	11	Անգլ. միսս Ռոբերտսոնից՝ խինին . .
			2 արկղ
3	»	»	» » » յողի պրեպարատներ
			2 »
4	»	21	Ամերկոմի միջոցով զանազան դե- ղորայք
			14 »
5	հուլիս	20	Զմյուռնիայի Հ. Կ. Խաչից՝ ոճառ .
			16 պարկ
6	»	»	Կ. Պոլսի Հ. Կ. Խաչից՝ հին շորեր .
			2 արկղ
7	ոգոստ.	2	» » » » » զանազան դե- ղորայք
			23 արկղ
8	»	9	Յերեվանի Անգլ. Ոգնութ. Կոմ. լիա- զոր՝ միսսոր Հատկորդից՝ դեղո- րայք և իրեր
			3 »
9	սեպտ.	4	Ամերիկայի Հ. Կ. Խաչից՝ Ամերկոմի միջոցով հին շորեր
			24 հոկ
10	հոկտ.	24	Միսս Ռոբերտսոնից՝ դեղորայք . . .
			5 արկղ
11	դեկտ.	26	Ամերիկայի Հ. Կ. Խաչից՝ Ամերկոմի միջոցով հին կոշիկներ
			10 »
1923 թ.			
12	փետրվ.	2	Կ. Պոլսի Հ. Կ. Խաչից՝ խինինի ամ- պուլներ
			1 »

1923 թ.			
13	փետրվ.	2	Կ. Պոլսի Հ. Կ. Խաչից՝ հին զգեստներ
			1 արկղ
14	մարտ	2	Հայաստանի Ոգնության Կոմիտեից՝ ոճառ
			5 պարկ
15	»	»	Հայաստանի Ոգնության Կոմիտեից՝ ոճառ
			14 արկղ
16	ոգոստ.	3	Իտալիայից՝ խինին (տարիտներ) .
			3600 հատ
17	սեպտ.	10	Մոսկվայից՝ խինին
			10 կիլո
18	»	26	Նյու-Յորքից՝ խինին (4 արկղ տար- իտներ)
			200.000 հ.
19	»	»	Մարսիլի Հ. Կ. Խաչից՝ զանազան դե- ղորայք
			1 արկղ
20	»	»	Ալեքսանդրիայից՝ զանազան դեղորայք
			1 »
21	»	28	Մոսկվայից՝ ապտեկաններ յուրաքան- չյուրը 3000 հիվանդի համար՝ դեղորայքով
			5 հատ
22	հոկտ.	5	Համբուրգից՝ զանազան դեղորայք .
			22 արկղ
23	նոյեմ.	10	Ամերիկայի Հ. Կ. Խաչից՝ հին շորեր .
			4 հոկ
24	»	»	» » » » կոշիկներ
			2 արկղ
25	դեկտ.	28	Համբուրգից՝ զանազան դեղորայք .
			5 »
26	»	»	Յերեվանի Անգլ. Ոգնութ. Կոմ.՝ խինին
			12 կիլո
1924 թ.			
27	փետրվ.	2	Թիֆլիսի Իտալական միսիայից՝ զա- նազան դեղորայք
			7 արկղ
28	»	7	Նյու-Յորքի Հ. Կ. Խաչից՝ հին շորեր
			40 հոկ
29	մարտ	21	Զմյուռնիայի Հ. Կ. Խաչից՝ 1922 թ. Պոլիս ուղարկած զանազան դեղորայք
			1 արկղ

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ

ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԸԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Վայրեր ուր գործում են Կ. Խ. հիմնարկները	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս
Զանգեզուր	825	711	1056	784	633	743	612
Լոռի	—	—	—	—	—	—	—
Քանաքեռ	—	—	—	533	993	644	601
Բոյոբլ-Վեդի	948	—	1440	1147	1519	—	—
Եջմիածին	—	—	—	—	—	—	—
Դիլիջան	—	—	—	—	—	—	—
Մալյարիային խմբեր	—	—	—	—	—	—	—
I Զանգե-Ֆասարի խմբ.	—	—	—	—	—	հունիսի	
II Սամաղարի »	—	—	—	—	—		

Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ԿԱՐՄԻՐ ԽԱՁԻ ՄԱՍՆԱՋՅՈՒՂԵՐՈՒՄ 1923 թ.

Ոգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը	ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ
708	824	1345	1397	1124	10762	
—	—	—	—	—	2887	
905	597	—	—	—	4273	բժշկականը փակվել և հոկտ. 1-ից
—	—	—	—	—	5054	բժշկականը փակվել և հունիսի 1-ից
—	—	—	442	1004	1446	աշխատանքները սկսվել են նոյեմբ. 20-ից
—	724	960	—	—	1684	
—	—	—	—	—	—	
—	—	—	—	—	17173	վորոնցից մալյարիայով հիվանդ 9746
15-ից մինչև հոկտեմբերի 15-ը	—	—	—	—	15256	» » 9486
					58535	

ՀԱՇՎԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏԱՑԱԾ
1922 թ. ՄԱՐՏ 1-ից ՄԻՆՉԵՎ

	Մ Ո Ւ Տ Ք	Բ.	Կ.	Բ.	Կ.
1	Ստացված և արտատահմանից ա) Դեղորայք 46825 22 բ) Գործիքներ 1675 25 գ) զանազան ապրանք 22486 38 70986 85				
2	Խորհ. Միութ. սահմաններում ա) դեղորայք Մոսկվայից 710 բ) 5 հատ ապուեկա „ 5000 5710 76696 85				
				76696	85

ሃገሪቱ

ՅԵՎ ԲԱՇԽԱԾ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՅԵՎ ԶԱՆԱԶԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
1924 թ. ԱՊՐԻԼ 1-Ը

	ՅԵԼՔ	Բ.	Կ.	Բ.	Կ.
1	Բաց և թողնված զեղորայք՝				
	ա) բժշկակալաններին	5925	15		
	բ) հիվանդանոցներին	6	25		
	գ) մանկատներին	169	80		
	դ) Առժողկոմի կենտ. զեղապահ.	950	15		
	ե) մասնավոր հիվանդներին	69	04	7120	39
2	Հայ կար. Սաչի մասնաճյուղերին բաց և թողնված 5 ապտեկա	5000		5000	
3	Բաշխված և զգեստ և կոշիկներ զանազան հիմնարկությանց, շրջաններին, մասնաճյուղերին և աղքատ ընտանիքներին:	9033	10	9033	10
4	Եջմիածնի տրոպիքական կա- յանի համար ծախված և 40 հակ հին զգեստ	9200			
	Առժողկոմատին զանազ զեղոր.	5575		14775	
	Մնացորդ				
	Դեղորայք	34839	83		
	Գործիքներ	1675	25		
	Ձանազան ապրանք	4253	28	40768	36
				76696	85

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՎԵԿՇԻՌ
1922 թ. ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԻՆՁԵՎ

Հ Ա Ս ՈՒ Յ Թ Ն Ե Ր		Ռ.	Կ.
1.	Զանազան նվերներ	1032	5
2.	Յերեկույթից և վիճակախաղից	1101	
3.	Անդամավճարներից	160	50
4.	Մաս հանում անցյալներից և տոմսերից	270	95
5.	20% տուրք զվարճատեղերից	285	75
6.	5% հավելյալ տուրք ուղղակի հարկերից:	7882	50
Գումար		10.732	75
		10.732	75

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՁԻ
1924 թ. ԱՊՐԻԼԻ 1-Ը

Ծ Ա Խ Ս Ե Ր		Ռ.	Կ.
1.	Կենտ. վարչ. գրասենյակի պաշտոն. աշխատավարձ	2,366	50
	Տնտեսական և գիտական	200	50
	Փոխադրական ծախսեր	1,050	65
2.	Դեղատոմսերի տնտեսական ընդ. ծախս	365	25
	Դեղատոմսերի վարձ	200	—
3.	Գլխավոր թուղթի գասընթացների աշխատավարձ	550	—
4.	Բոյուկ-Վեդի բժ. կայանի պաշտ. աշխ. ծ	1,245	50
	Տնտեսական և գիտական	100	75
5.	Քանաքեռի բժ. կայանի պաշտ. աշխ. վարձ	410	—
	Տնտեսական և գիտական	15	60
6.	Զանգեզուրի մասնաճյուղին	1,100	
7.	Լոռու մասնաճյուղի բժ. կայանին նպաստ	70	
8.	Մալաթիային 2 շրջիկ խմբերի աշխ. վարձ	1,700	
	Տնտեսական և գիտական	195	50
9.	Նպաստ և նվեր	105	
10.	Պաշտոնյաների Սոց. Ապահով. տուրք	150	
11.	Գլխ. վարչության ճանապարհածախս որապահ.	331	60
Գումար		10,156	85
Մնացորդ առ 1-ն ապրիլի 1924 թ.		575	90



ՀՀ Ազգային գրադարան



NL0217303

4081